Shutting Out interrupting or cutting off another person; paying no attention to the previous comment.

Court Jesting making a display, lack of involvement in the group; horseplay, non-chalance, etc.

Responses

Responses that Stimulate

1. When stating your position...

- I'm just wondering...
- In my opinion...
- How would you respond to this...
- How do you feel about...

2. When you want them to say more...

- I'm not sure I understand what you're saying...
- Is this what you're saying...
- What do you mean?
- Can you explain (or illustrate) that...
- How are you defining...
- I'm not sure I see where the conflict is...
- So essentially what you're saying is...
- It seems like you're saying...
- I understand what he/she is getting at...
- What were you aware of when that happened...
- What have you tried...

3. When you want to disagree...

- What you're saying raises some red flags in my mind...
- My perception of this issue is a little different. Can I tell you what it is?
- I'm not piecing together the facts in the same way...
- Correct me if I'm wrong, but I see a conflict between...
- That would make a lot of sense to me, but...
- This doesn't seem to fit with what you've said before...
- I appreciate that perspective...
- That's interesting. But how does that fit with what we are considering?
- We have two views shared. Does anyone else want to offer their viewpoint?

4. When you agree...

- That's really good. I've never heard it put that way before.
- That agrees with what I've been thinking.

5. When you partially agree...

- I agree with you (state what you agree with) but I'm not seeing eye-to-eye on this other issue...

6. When you want to stimulate discussion

- Excuse me. Before you continue, I'd be interested in the group's reaction to that...
- How does what you're saying relate to his/her comment...?
- What is it like for you...
- What could you do about...
- What would you like to happen?
- What would you have to lose if you...
- What would you be willing to...
- What would you do differently...
- Where in your body do you experience (anger, guilt, rage, fear, hurt, etc.)?
- What makes it difficult for you to...
- What would you be willing to try this week...
- What were you surprised about...
- How does this affect you personally?

7. When the group cannot get started...

- Can someone else rephrase the question to help us get started?.
- Maybe we need to try another question.

3
0
12
0
0
1**Responses That Stifle**

- It's a proven fact that...
- That's just the way it is...
- There's no question about...
- Only fools believe...
- The Bible says... You don't know what you're talking about...
- That's ridiculous...
- Look at the evidence...
- That just doesn't fit the facts...
- You're not serious...
- Well, if you believe that, then...
- There's just no evidence for...
- That's been totally disproved...
- We've never done it that way...
- You shouldn't think that..
- We've done that in the past...

Names associated with the Conversion of Armenia 301 AD

Most of the following names are mentioned by the historians: Agathangelos, Moses of Khoren and Zenob Glak, in their accounts concerning St. Gregory the Enlightener and the declaration of Christianity as the official religion of Armenia. The remaining names have direct or indirect connection to that event.

Anahid Անահիտ	Khosrovitookht Խոսրովիդուխտ
Anastas Անաստաս	Krikor Գրիգոր
Andon Անտոն	Magar Մակար
Ararad Արարատ	Mané Մանե
Arax Արաքս	Mariam Մարիամ
Ardavasd Արտավազդ	Mariné Մարինե
Aristakes Արիստակես	Massis Մասիս
Asbed Ասպետ	Mihran Միհրան
Ashkhen Աշխեն	Movses Մովսես
Bagrad Բագրատ	Muron Միւրոն
Bartev Պարթեւ	Nersess Ներսէս
Bartholomew Բարթողիմէս	Nooné Նունե
Constantine Կոստանդին	Partoghomeos (Partogh) Բարթողիմէս (Բարթող)
Dajad Տաճատ	Sebounh Սեպունի
Daniel Դանիէլ	Shoghagat Շողակաթ
Drtad Տրդատ	Smbat Սմբատ
Garabed Կարապետ	Sophia Սոփիա
Gayiané Գայիանե	Souren Սուրեն
Ghevont Դեւոնդ	Tateos Թադէոս
Giragos Կիրակոս	Thaddeus Թադէոս
Gregory Գրիգոր	Timothy Տիմոթէոս
Grigoris Գրիգորիս	Torkom Թորգոմ
Hagop Յակոբ	Vagharsh Վաղարշ
Hayrabad Հայրապետ	Vahagn Վահագն
Helen Հելեն	Vertanes Վրթանէս
Houssik Յուսիկ	Victor Վիկտոր
Hovhannes Յովհաննէս	Virab Վիրապ
Hripsimé Հռիփսիմե	Yeghiazar Եղիազար
Karnig Կառնիկ	Zenob Զենոբ
Khat Խադ	
Khosrov Խոսրով	

Projects and Programs Under Preparation by DRE

1. Commitment Sunday

Will be celebrated on April 1, 2000.

Pastors will receive detailed instructions on how to put together this two- hour event to take place after Badarak.

The purpose of this program is to educate parishioners about the conversion of Armenia and especially St. Gregory's role in this story so crucial to our history. It is also meant to encourage people to make a personal and concrete "commitment" to their church.

The program will include a bread and water meal, a meditation, a reading from the conversion story, small group study of the Parable of the Talents, and an exercise requiring participants to reflect on their gifts and make a personal pledge to their church community based on those gifts.

2. Parish Retreat: "In the Footsteps of the Enlighteners"

The DRE will provide all resources and materials needed for the pastor or a delegated retreat leader to facilitate a 1 7-hour retreat (7:00 a.m. to midnight) for adults of all ages on the theme of Christian conversion - historic, personal and daily - and entitled "*In the Footsteps of the Enlighteners.*"

The retreat will include worship, Scripture study, video presentations, small group work, personal discussion and sharing and time for private reflection and prayer. It is designed for those at the beginning of the spiritual journey who have never attended a retreat, but will certainly appeal to those with previous retreat experience.

3. 17-week Bible Study: "Looking Inward, Moving Forward"

Using the five focus areas chosen by the Diocesan Council to guide its goals and actions for the next few years—worship, youth, leadership, communication, and stewardship, this Bible study is designed for 1 1/2 hour weekly sessions at optimum parish time (evening, weekday, Sunday, etc.).

The study will draw on Scripture readings from Genesis, I Samuel, and Amos from the Old Testament and the Gospel of Matthew, and select verses from the Epistles. Simple exegesis, values exercises and reflection questions will encourage participants to think critically about their *personal* spiritual journey even as the Armenian Church celebrates a milestone of its own.

4. Pentecost: Vocations Sunday

A brief parish resource comprising Scripture reading, homily, and reflection activity based on the story of Pentecost and the challenge of both lay and ordained ministries in today's Armenian Church. The 30-minute program can form the basis of a sermon or

parish address or can be used as is at a school assembly, parish gathering or fellowship hour.

5. **Jubilee Play:** “*Children of the Morning*”

A 14-scene play about the conversion of Armenia to Christianity in the 4th century comprising 12 characters (with doubling up of roles possible) and simple, even entirely optional costumes and sets.

Written by playwright and Sunday School teacher Diane Bairamian (who, despite her Off-Off-Broadway success - including an out-of-state tour - would call religious education her *most* important task), *Children of the Morning* was commissioned specifically for the Jubilee Year. It can be produced and performed by a school, youth group or parish auxiliary for the benefit of the entire parish and can be memorized and staged or simply presented as a reading.

6. Dramatic Reading for Parish Worship/Gatherings A chain of brief paragraphs in the style of St. Nersess Shnorhali's *Havadov Khosdovanim*, the story of the conversion of Armenia is told through the voices of the men and women who brought Christ into the heart of a nation. These can be used in a worship setting (at the end of liturgy), public gatherings, school assemblies or any time and as often as the story needs to be told during this Jubilee Year.

The readings are brief and designed to be read round-robin, with no preparation. An easy-to-use parish resource.

7. **Coloring Book**

“*The Story of How Armenia Became the First Christian Nation*” Bi-lingual text and the marvelous line drawings of Armenian artist Siran Kaprielian Pirani will tell young and old alike the fascinating story of Armenia's conversion to Christianity. A saint trapped in a pit of vipers and spiders, a king who falls to the ground in an animal frenzy, a princess who steals through the night to keep a holy man alive - the stuff of fairy tales? No, just some of the scenes from the sacred story of Armenia's rebirth.

Projects and Programs Suggested by ALLARC

The Title Of All The Gatherings Will Be

WE THE FIRST CHRISTIAN NATION

Programs for Diocesan Armenian schools and Parishes
To Celebrate the 1700th Anniversary of the adoption of
Christianity as Armenia's State Religion

52 Weeks

With awards, prizes and certificate of Merit

3
0
1

2
0
0
1

The programs aim to

*Encourage Church Attendance and make it part of our life
Educate*

*Diversify Church Group Activities bringing together all
ages, all interests..*

Promote individual Initiatives

*Promote The Armenian Church to Armenians and non
Armenians as well*

How to Celebrate the 1700th Anniversary

Here are some ideas to cover 52 weeks.

- 1 Opening ceremonies: lighting of 301 candles
- 2 Opera for Youngsters and Adults: "The First Christians"
- 3 Musical Show for youngsters: "The Year 301"
- 4 One-Day Symposium: "Light Of Light" *The Armenian church Knows the secret Road to Heaven Hidden Under Every Stone*
- 5 "In The Footsteps Of The 12 Apostles" - 12 Workshops conducted by 12 Scholars on the New Testament, in 12 different Cities. For all Members
- 6 Lighted Map Of Armenia, with the picture of the Apostles Thaddaeus and Bartholomew: in the Center of the map. 52 lights for 52 weeks. Each light will be sponsored. Each light will be lit each Sunday for 52 Weeks. At the end of the year the whole map will be lighted representing the enlightenment of the Armenian Nation
- 7 "One-Day Tour To Armenia" for youngsters: "Let's Visit the Holy Places" such as Etchmiadzin, Khor Virap, Shoghagat etc.
- 8 Oral Contest: 100 Question/Answers. "We The First Christians"
- 9 Reading Contest: "Christianity In Armenia"
- 10 Spelling Contest: 301 Words "The First Christian Nation"
- 11 Poetry Contest: "We The First Christian Nation"- "Jesus is 2000 Years Old"- "Jerusalem"
- 12 Art Exhibition: The First Armenian Church: "Etchmiadzin": When? Why? Who? What?
- 13 Music: Instruments: Religious and Popular
- 14 Music: Songs: Religious and Popular
- 15 Dance: Celebrations
- 16 Perfect Attendance Prize for attending Church services 40 Weeks out of 52
- 17 On-going Story of Christianity in Armenia in 52 Parts for 52 Weeks
- 18 Simulation of Khor Virap; Go from a dark room (Hall) where a lunch of bread (different countries' breads) only is served which will be followed by another simulation representing the going out of Khor Virap: this time the group enters a room (Church) illuminated with 301 candles. It is quite an inexpensive project and should be accompanied by the history of Khor Virap and appropriate Sharagans and prayers
- 19 Let's have a Library named: "The First Christian Nation" in each Church
- 20 Biographies of the Holy Translators
- 21 Contests Reading, Reciting and Writing: The First Sentence Translated into Armenian from the Bible
- 22 Group Contests: Group I Thaddaeus and Bartholomew Group II: Krikor and Drtad

- 23 Singing of Badarak by the various organizations of the church, on the same day. One song for each organization - On a Special Sunday
- 24 Group Contests: Havadamk recited by 12 people - The 12 Parts of Havadamk
- 25 A musical Fountain with 301 Jets of water (Springing)
- 26 Group Contest: Changes: From Pagan period To Christianity: Names, Words.
- 27 Changing of the names of the Holidays and Traditions from Pagan period to Christianity
- 28 Group Contests; 301 Bible Verses
- 29 Group Contests: 2 Big Books with blank pages will be placed on each side of the hall. Fill in the Bible pages with Bible verses.
- 30 Decorate the hall with the pictures of all those who shaped up our Faith
- 31 Body Language: Church Related Words: "Christianity In Armenia"
- 32 Group: Planting of 301 different flowers. Each flower will be named after one person or family. The sponsors will be in charge of taking care of the flowers
- 33 Reach-Out: Foods for 301 families
- 34 Invite 301 Non-Armenians to worship with us. 13 For Each Family
- 35 301 Tiles with Armenian Bible Verses to decorate the Church's Hall or Plaza
- 36 Invite other church choirs to sing in your church
- 37 301 Trees for the city or town by members of the church.
- 38 Balloon with a big title: "Armenia: The First Christian Nation" going on the sky and around the city
- 39 Church Members: Release of 301 Balloons with Bible verses & invitation to your Church
- 40 Church Members: Release of 301 Balloons with highlights of the Armenian History and Christianity in Armenia as well as the church's telephone number to get a prize
- 41 Reaching out to 301 people by telephone chain
- 42 Publicity in the local American newspapers, every day
- 43 Group Contest: Crossword Puzzles with 17 Church related words. 15 minutes for each group and Prizes for the winners
- 44 Master Of Ceremonies named and dressed after those who were involved in the introduction of Christianity: King Drtad, St. Gregory, Thaddaeus, Bartholomew etc.
- 45 One-day a week the church should offer uninterrupted religious and cultural services and programs: Videos, Narration, Music, Songs etc. from 11:00 to 4:00 pm. All are welcome
- 46 Special signs on the door of the church/hall - Through Contests by Armenian Artists
- 47 Copy of one Chapter from the Bible in Armenian - 52 Chapters, 52 people like the Armenian Illuminated Manuscripts
- 48 Talent show from 3 to 101 year-olds
- 49 Desk Signs for the whole year, designed by the local artists.
- 50 Sponsor a "Hammer" . The heavenly Hammer that indicated St. Gregory the spot of the first Armenian Church, Holy Etchmiadzin, to be built
- 51 Readings on the Radio or Television about "Christianity In Armenia"

52 Closing Ceremonies: Brochures with 301 Actions to be taken to Flourish our Church and Deepen Our Faith, should be given to all members of the Church

Reference Book:

"Feasts of the Armenian Church and National Traditions"

In Armenian and in English - by *Garos Bedrosian*

For further information, please call 212-686-0710 ext. 48

ALLARC

PROJECTS TO CELEBRATE THE 2001 THE GREAT JUBILEE

It is easy to brag about the fact that we were the First nation to accept Christianity. It is not only childish it also provokes the reaction of so what? It will be more meaningful if we spent time to learn the impact that this acceptance had on our nation, our culture. What we gave up, what we accepted, what are the basics elements of our religion that distinguishes it from other Christian religions. ? What makes us unique and what are the obligations of this uniqueness. ? The projects that we have chosen aim to help the listeners to become more knowledgeable in every aspects of our religion strengthen our faith and give us the necessary willingness to want to make a difference..

Participants and Organizers

Decors, Awards, Hotel, Foods, Transportation, Honorariums, Artistic Directors, Printing, Video, Publicity, Computer Expert

3
0
1

A MUSICAL

2
0
0
1

“The Year 301”

The Armenian Schools' Students with Narration, Songs, Orchestra, Dance and Poems will present the story of the introduction of Christianity in Armenia. The text as well as the directives will be given to all Diocesan Armenian Schools to present this Musical by Regions or in each Parishes.

Ages 3 to 18

PUBLICATION - OPERA

For Youngsters - The First Christians

Dr. Socrates Boyadjian is working on this opera. The youngsters will have the opportunity to present the story of the first Christians in a more sophisticated way. The whole Armenian Community members will benefit from this project.

ART EXHIBITION

“The First Armenian Church” When? Why? Who? What?

All Diocesan Armenian Schools students will participate

The opening of the Exhibition will be held on the Etchmiadzin Day
The Artworks will be sold to establish a Fund for the Diocesan Armenian Schools.
Ages 3 to 12

ORAL CONTEST: FACTS - VERSES - PRAYERS

“The Armenian Church: History And Traditions”

100 Questions on the History of the Armenian Church and traditions in Armenian/English as well as the directives will be given to schools to organize this contest. The students will receive the “Holy Etchmiadzin” Award.
Ages 3 to 18

READING CONTEST

“Christianity In Armenia”

The story of Christianity in Armenia and the Diaspora in 3 levels: Beginner, Intermediate and Advanced as well as the directives will be given to schools to organize this contest. The winners will receive “St. Gregory” Award.
Ages 8 to 18

SPELLING CONTEST

“301 Words: The First Christian Nation”

301 words on Armenia and Christianity in Armenia as well as the directives will be given to schools to organize this contest. The winners will receive “King Drtad” Award.
Ages 8 to 18

ONE-DAY TOUR TO ARMENIA

Let's Visit The Holy Places

4-hour program for children. They will learn with Songs, Arts & Crafts, Poems. Prayers, Cheers, Verses, Crosswords, Wonderwords and Games about the places and the stories before and after the introduction of Christianity in Armenia related to King Drtad, St. Gregory and Thaddaeus and Bartholomew.
Ages 3 to 12

THE NEW TESTAMENT - WORKSHOPS & PUBLICATION

In The Footsteps Of The 12 Apostles

12 Workshops with 12 Scholars in 12 Cities

12 Scholars will be selected to visit 12 Regions to conduct workshops on the New Testament and the Translations of the Bible the example of the first illuminators.

LIGHTED MAP OF ARMENIA

Thaddaeus & Bartholomew: The First Illuminators Of Armenia

Each Armenian School will be in charge of displaying a big Map of Armenia with the First Illuminators in the center of the map and 52 bulbs around the map. Each bulb will be donated by individuals or organizations. One light will be lit each Sunday by the donors.

The first light will be lit on the First Illuminators' Day

INTERNET

3
0
1

“Armenia: We Are # 1”

A page will be prepared to inform the public about the contribution of the Armenians to the Christian Religion

2
0
0
1

NOTE:

While working on the above presented projects, we should have in mind that the “Creativity and the Inspiration” will most probably force us to make some changes to make them more interesting, affective and meaningful.

ALLARC

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԿՐՕՆԸ

1 Ի՞նչ է կրօնքը:

– Կրօնքը մարդուն հոգեկան յարաբերութիւնն է Աստուծոյ հետ:

2 Մարդը ի՞նչպէս հասկցած է որ կայ գերագոյն ոյժ մը:

– Անսահման տիեզերքին մէջ, տկար ոյժերով մարդը սկիզբէն զգաց որ իրմէ եւ տիեզերքէն ալ վեր գոյութիւն ունի գերագոյն ոյժ մը, ամենակարող էութիւն մը՝ Աստուած:

3 Բոլոր մարդիկ կրօնք ունեցած են:

– Այո՛, բոլոր մարդիկ ունեցած են եւ ունին կրօնք:

4 Հին ժողովուրդներու կրօնքները ինչպէ՞ս եղած են:

– Հին ժողովուրդներու կրօնքները իրենց քաղաքակրթութեան նման եղած են:

5 Մինչեւ ե՞րբ անկատար մնացած են:

– Մինչեւ Քրիստոս - Աստուծոյ Որդին, որ աշխարհ եկաւ եւ մարդոց քարոզեց կատարեալ եւ ճշմարիտ կրօնքը՝ Քրիստոնէութիւնը:

6 Տիեզերքի ստեղծագործութենէն մինչեւ քրիստոնէական կրօնքի յայտնուիլը, մարդիկ ի՞նչ բաներու հաւատացած են:

– Մարդիկ հաւատացած են որ գոյութիւն ունին գերբնական եւ անմարմին էակներ կամ ոգիներ:

7 Բնութեան բազմազան տարրերուն, երեւոյթներուն եւ կենդանիներուն պաշտամունքը ի՞նչ կը կոչուի:

– Բնութենապաշտութիւն:

8 Իսկ ոգիներու պաշտամունքը ի՞նչ կը կոչուի:

– Ոգեպաշտութիւն:

9 Քանի՞ տեսակ ոգիներ կային:

– Երկու տեսակ ոգիներ կային. չար եւ բարի:

10 Չար ոգիներու վնասներէն ազատելու համար ի՞նչ միջոցներու կը դիմէին մարդիկ:

– Չար ոգիներու վնասներէն ազատելու համար կախարդութեան եւ երկրպագութեան կը դիմէին:

11 Իսկ բարի ոգիներէն օգտուելու համար ի՞նչ կ'ընէին:

– *Բարի ոգիներէն օգտուելու համար զոհեր կ'ընէին անոնց:*

12 Հին մարդոց պաշտած աստուածները ի՞նչ կը կոչուէին:

– *Հին մարդոց պաշտած աստուածները կը կոչուէին Դիք:*

13 Բազմաթիւ աստուածներու կամ դիքերու պաշտամունքը ի՞նչ կը կոչուի:

– *Դիցապաշտութիւն:*

14 Աստուածները քանի՞ տեսակ կ'ըլլային:

– *Աստուածները կ'ըլլային թէ՛ արական եւ թէ՛ իգական:*

15 Ի՞նչ կը կոչուէին արական աստուածները:

– *Արական աստուածները դիք կը կոչուէին:*

16 Ի՞նչ կը կոչուէին իգական աստուածները:

– *Իգական աստուածները դիցուհի կը կոչուէին:*

17 Հին հեթանոս ազգեր դիքերն ու դիցուհիները պաշտելու համար ի՞նչ բաներ շինած են:

– *Հին հեթանոս ազգեր դիքերն ու դիցուհիները պաշտելու համար շինած են անոնց պատկերները կամ արձանները, որոնք կուռք կը կոչուէին:*

18 Ի՞նչ կը նշանակէ կուռքապաշտութիւն բառը:

– *Կուռքապաշտութիւն բառը կը նշանակէ կուռքերու պաշտամունքը:*

19 Հին ժողովուրդներ ի՞նչ բանի կը հաւատային:

– *Հին ժողովուրդներ կը հաւատային որ քաջ մարդիկը դիւցազն են, այսինքն անոնք ծնունդ առած են աստուածներու սերունդէն:*

20 Քաջ մարդոց կամ դիւցազուններու պաշտամունքը ի՞նչ կը կոչուի:

– *Դիւցազնապաշտութիւն:*

21 Հին աշխարհի հեթանոսական բոլոր կրօնքները ինչպե՞ս էին:

– *Բազմաստուածեան էին, այսինքն հին մարդիկ կը պաշտէին շատ աստուածներ փոխան մէկի:*

22 Հրէական կամ Մովսիսական կրօնքը քանի՞ Աստուծոյ կը հաւատար:

– *Հրէական կամ Մովսիսական կրօնքը կը հաւատար մէկ Աստուծոյ:*

23 Տասնաբանեայ Պատուիրաններու առաջին պատուէրին մէջ Աստուած ի՞նչ կը պահանջէ:

– «*Ինձմէ զատ ուրիշ աստուած պիտի չունենաս*»:

24 Հրեաները Աստուածը ի՞նչ կը կոչէին:

– *Հրեաները Աստուածը կը կոչէին Եհովա*:

25 Հրեաները ի՞նչ բանի հակառակ էին:

– *Հրեաները կռապաշտութեան հակառակ էին*:

26 Տասնաբանեայ Պատուիրաններու երկրորդը ի՞նչ կ'ըսէ:

– «*Կուռք պիտի չպաշտես*»:

27 Մովսիսականներուն կրօնքը կատարեալ էր:

– *Մովսիսականներուն կրօնքը կատարեալ չէր*:

28 Անոնք ի՞նչ կը խորհէին:

– *Անոնք կը խորհէին թէ Աստուած (Եհովա) միայն Հրեաներու Աստուածն է:*

3
0
1

29 Անոնք Եհովան ի՞նչպէս կ'երեւակայէին:

– *Անոնք Եհովան կ'երեւակայէին խիստ բնաւորութեամբ Աստուած մը, վրէժխնդիր եւ քանդող:*

2
0
0
1

30 Մինչդեռ Աստուած ինչպէ՞ս է:

– *Աստուած ամենաբարի է եւ անհունօրէն կը սիրէ մարդիկ:*

31 Մովսիսական կրօնքը բարոյական վեհ սկզբունքներ ունէ՞ր:

– *Ո՛չ: Մովսիսական կրօնքը բարոյական վեհ սկզբունքներ չունէր. անիկա կը քարոզէր վրէժխնդրութիւն, ըսելով «Ակռայի դէմ՝ ակռայ, եւ աչքի դէմ՝ աչք»:*

32 Մինչ Աստուած ի՞նչ կ'ուզէր:

– *Աստուած կ'ուզէր որ մարդիկ զիրար սիրեն եւ ներողամիտ ըլլան իրարու հանդէպ:*

33 Մովսիսականները մեղաւոր եւ օտար մարդերը ի՞նչ կ'ընէին:

– *Մովսիսականները մեղաւոր եւ օտար մարդերը կ'արհամարհէին եւ զանոնք կորսուած կը համարէին:*

34 Մինչդեռ Աստուծոյ առջեւ բոլոր մարդիկ ինչպէ՞ս են:

– Աստուծոյ առջեւ բոլոր մարդիկ մէկ են եւ արժանի՝ Աստուածային շնորհքի ու փրկութեան:

35 Ո՞վ լրացուց Մովսիսական կրօնքը, որ անկատար էր:

– Աստուծոյ Որդին՝ Քրիստոս, լրացուց Մովսիսական կրօնքը, որ անկատար էր՝ իր յայտնած նոր կրօնքով, որ է Քրիստոնէութիւնը:

36 Քրիստոնէութիւնը ի՞նչ է:

– Քրիստոնէութիւնը Քրիստոսի կրօնքն է: Քրիստոս ըսաւ. «Ես եմ ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը»:

37 Քրիստոնէութիւնը ի՞նչ կը քարոզէ:

– Քրիստոնէութիւնը կը քարոզէ մէկ Աստուած, ճշմարիտ Աստուածը, որ բոլոր ժողովուրդներուն Աստուածն է:

38 Քրիստոնէութիւնը խտրութիւն կը դնէ՞:

– Քրիստոնէութիւնը խտրութիւն չի դնէր, ո՛չ միայն ժողովուրդներու, այլեւ՝ մարդերու միջեւ:

3
0
1

39 Քրիստոնէութիւնը մարդկութեան ի՞նչ յայտնեց:

– Քրիստոնէութիւնը մարդկութեան յայտնեց որ ճշմարիտ Աստուածը անհունօրէն կը սիրէ մարդկութիւնը:

2
0
0
1

40 Ամենաբարի Հայր Աստուած ի՞նչ կը փափաքի:

– Ամենաբարի Հայր Աստուած մեղաւորներուն կորուստը չի փափաքիր, այլ կ'ուզէ որ անոնք զղջան իրենց գործած յանցանքներուն համար, ապաշխարեն եւ ապրին սիրոյ ու բարութեան կեանք:

41 Քրիստոնէական կրօնքը ի՞նչ կ'ուսուցանէ:

– Քրիստոնէական կրօնքը մարդոց կ'ուսուցանէ Աստուածապաշտութիւն եւ բարոյական բարձր սկզբունքներ:

42 Քրիստոնէութիւնը ի՞նչ տեսակ կրօնք մըն է:

– Քրիստոնէութիւնը միակ ամենակատարեալ կրօնքն է ամբողջ տիեզերքի մէջ:

43 Քրիստոնէութեան կրօնական եւ բարոյական սկզբունքները ո՞ր կը գտնուին:

– Քրիստոնէութեան կրօնական եւ բարոյական սկզբունքները Սուրբ Գիրքին մէջ կը գտնուին:

44 Սուրբ Գիրքը քանի՞ մասերէ կը բաղկանայ:

– Սուրբ Գիրքը կը բաղկանայ երկու մասերէ. Հին Ուխտ եւ Նոր Ուխտ:

45 Հիմ Ուխտին մէջ ի՞նչ պատմուած է:

– Հին Ուխտին մէջ պատմուած է Հրեայ Ժողովուրդի կեանքը եւ նկարագրուած են մարգարէներու գործերն ու պատգամները:

46 Նոր Ուխտին մէջ ի՞նչ գրուած է:

– Քրիստոսի կեանքին պատմութիւնը, Անոր քարոզած կրօնական սկզբունքներն ու բարոյական պատուէրները եւ Առաքեալներու գործերն ու խրատները Նոր Ուխտին մէջ գրուած են:

47 Քրիստոնէութենէն եօթը դարեր ետք, ո՞ր կրօնքը յառաջ եկաւ:

– Քրիստոնէութենէն եօթը դարեր ետք Մահմետականութիւնը յառաջ եկաւ ուրիշ միաստուածեան կրօնք մը, որ քարոզուեցաւ Մուհամմէտ արաբ մարգարէին կողմէ:

48 Ի՞նչ տեսակ կրօնք մըն է Մահմետականութիւնը:

– Մահմետականութիւնը խառնուրդ մըն է հեթանոսական, մովսիսական ու քրիստոնէական կրօնական տարրերու:

49 Հիմ ժողովուրդներու նման, հայեր եւս բնութեանապաշտ եղա՞ծ են:

– Այո՛, հին ժողովուրդներու նման, հայեր եւս բնութենապաշտ եղած են, այսինքն՝ պաշտած բնութեան զանազան տարրերը, երկնային մարմինները, բոյսերն ու կենդանիները:

50 Հիմ ժամանակներուն, հայեր պաշտա՞ծ են լեռները:

– Այո՛, մանաւանդ ա՛յն լեռները որոնք հրաբխային եղած են: Յատուկ պաշտամունքի առարկայ եղած են Հայաստանի լեռներէն՝ Մասիս, Արագած, Վարազ, Սիփան, Նեմրութ եւայլն:

51 Հիմ հայեր յարգանք եւ պաշտամունք ունեցա՞ծ են բուսականութեան հանդէպ:

– Այո՛, յատկապէս ծառերու եւ ծաղիկներու հանդէպ: Ծառերէն մասնաւորաբար պաշտուած են բարտին եւ սօսին:

52 Հիմ ժամանակ մարդիկ ջուրը պաշտա՞ծ են:

– Այո՛, հայեր յատկապէս պաշտած են Սեւանայ, Վանայ ու Մեծամօր լիճերը, Արաքս, Եփրատ, Տիգրիս, Ճորոխ եւ Կուր գետերը, որովհետեւ ջուրը անհրաժեշտ է մարդու, կենդանիի եւ բոյսի կեանքին ու գոյութեան համար:

53 Հայեր ո՞ր կենդանիները պաշտած են:

– Հայեր յատկապէս պաշտած են հետեւեալ կենդանիները. ոչխար կամ խոյ, խոզ, կով, ձի, շուն, կատու, մուկ, աքլոր, ծիծեռնակ, արծիւ եւայլն:

54 Արեւն ու լուսինը մեծ պաշտամունքի առարկայ եղա՞ծ են:

– Այո՛, արեւն ու լուսինը մեծ պաշտամունքի առարկայ եղած են հին հայերու մօտ: Արեգակը մինչեւ իսկ աստուածացուած է:

55 Արեւուն եւ լուսինն հետ հայեր ո՞ր մոլորակները պաշտած են:

– Փայլածու, Արուսեակ, Հրատ, Լուսնթագ եւ Երեւակ: Շաբթուան օրերը նուիրուած էին անոնց եւ կը կոչուէին անոնց անուններով:

56 Ծիր կաթինը եւ ծիրանի գօտին պաշտամունքի առարկայ եղած կը համարուէի՞ն:

– Այո՛, Ծիր կաթինը եւ ծիրանի գօտին պաշտամունքի առարկայ եղած կը համարուէին:

57 Հին ժամանակներուն, հայեր երբ հեթանոս էին, ոգիներ պաշտա՞ծ են:

– Այո՛, հայեր անտեսանելի ու երեւակայական էակներ կամ ոգիներ պաշտած են:

58 Հայոց համաձայն, ոգիները քանի՞ տեսակ են:

– Հայոց համաձայն, ոգիները երկու տեսակ էին. բարի եւ չար:

59 Քաջերը ի՞նչ տեսակ ոգիներ էին:

– Քաջերը բարի ոգիներ էին: Նշանաւոր էին Մասիս լեռան կողերուն վրայ բնակող բարի քաջերը, որոնք վրէժխնդիր ոգիներ էին չար մարդերու դէմ:

60 Յարալէզները ի՞նչ տեսակ ոգիներ էին:

– Յարալէզները, որոնք Աւլէզ եւ Արալէզ եւս կը կոչուէին, պատերազմի ընթացքին սպաննուած քաջ մարտիկները լիզելով կ'ողջնցնէին. անոնք բարի ոգիներ էին: Յարալէզները, ըստ հին հայերու, շունի կերպարանքով կ'ըլլային:

61 Վիշապը ի՞նչ տեսակ ոգի էր:

– Վիշապը չար եւ վտանգաւոր ոգի էր, որ մարդոց կը յայտնուէր զանազան կերպարանքներով՝ հսկայ ու դաժան օձի, խոշոր ձուկի, ջորիի, ուղտի, թռչունի, մարդու եւայլն:

62 Յաւերժահարսերը ի՞նչ տեսակ ոգիներ էին:

– Յաւերժահարսերը կիները պաշտպանող էգ եւ բարի ոգիներ էին, որոնք կը

բնակէին գեղեցիկ վայրերու մէջ:

63 Քրիստոնէութեան շրջանին ի՞նչ կոչուեցան բարի ոգիները:

– *Քրիստոնէութեան շրջանին բարի ոգիները կոչուեցան հրեշտակ:*

64 Իսկ չարերը ի՞նչ կոչուեցան:

– *Չարերը կոչուեցան դեւ (սատանա):*

65 Հիմ հայերը ուրիշ ժողովուրդներու նման դիւցազուններ կը պաշտէի՞ն:

– *Այո՛, հին ժամանակներուն, հայեր ուրիշ ժողովուրդներու նման՝ կը պաշտէին դիւցազուններ, աստուածներէ սերած քաջ մարդիկ եւ թագաւորներ:*

66 Հայկ Նահապետ, Արա Գեղեցիկ, Վահագն եւ Տորք Անգեղ հայ ժողովուրդին կողմէ իբր ի՞նչ ընդունուած են:

– *Հայկ Նահապետ, Արա Գեղեցիկ, Վահագն եւ Տորք Անգեղ հայ ժողովուրդին կողմէ իբր դիւցազն ընդունուելով իրենց մահուընէ ետք աստուածացուած եւ պաշտամունքի առարկայ եղած են:*

67 Հայ ժողովուրդը ուրիշ ի՞նչ պաշտած է:

Աստուածներ-դիքեր եւ դիցունհիներ, որոնց կուռքերն ալ շինած էին, զանոնք պաշտելու համար:

68 Հիմ հայերու պաշտած աստուածներու գերագոյնը ո՞րն էր:

– *Արամազդ, որ կը նկատուէր աստուածներու հայրը:*

69 Ըստ մեր նախնիներու, Արամազդ ի՞նչ ստեղծեր էր:

– *Ըստ մեր նախնիներու, Արամազդ ստեղծեր էր այս աշխարհը եւ մեր երկրին ան կը պարգեւէր լիառատ բերք:*

70 Ի՞նչ կը կոչուէր Արամազդի որդին:

– *Արամազդի որդին Միհր կը կոչուէր:*

71 Որո՞նք էին Արամազդի երկու աղջիկները:

– *Արամազդի երկու աղջիկները Անահիտ եւ Նանէ աստուածուհիներն էին:*

72 Ի՞նչ գիտենք Արամազդի մասին:

– *Արամազդ կը նկատուէր նաեւ Ամանորի (Նոր Տարուան) աստուած, որովհետեւ անոր պաշտամունքի հանդիսութիւնները կը կատարուէին տարուոյն սկիզբը, Նաւասարդ (Օգոստոս) ամսուն, երբ երկիրը կը սկսէր տալ նոր արդիւնքներ:*

73 Արամազդ ինչո՞ւ համար Վանատուր եւս կոչուած է:

Հայաստանի բոլոր կողմերէն ուխտաւորներ պաշտամունքի կուգային անոր եւ ան կ'ընդունէր եկող հիւրերը: Ուստի, անիկա կոչուած է Վանատուր (հիւրընկալ) եւս:

74 Անահիտ դիցունիին մեծ պատուի ու պաշտամունքի առարկայ եղա՞ծ է:

— Այո՛, Անահիտ դիցունհին մեծ պատուի ու պաշտամունքի առարկայ եղած է Հայաստանի մէջ: Ան կեանք կու տար մարդկութեան, մայրն էր առաքինութիւններու եւ աղջիկը՝ Արամազդ աստուծոյ:

75 Ո՞վ էր Միհր:

— Միհր Արամազդի որդին էր,

76 Հայ ժողովուրդը կը սիրէ՞ր Միհրը:

— Այո՛, Միհրը հայ ժողովուրդի շատ սիրելի աստուածն էր: Ան լոյսի եւ արեւի աստուածն էր:

77 Ո՞վ էր Տիր աստուածը:

— Երազներու մեկնիչ եւ աստուածներու պատգամաբերն էր Տիր:

78 Ո՞վ էր հայոց գրականութեան եւ արուեստներու պաշտպան աստուածը:

— Հայոց գրականութեան եւ արուեստներու պաշտպան աստուածը՝ Տիրն էր:

79 Ո՞վ էր Աստղիկ:

— Աստղիկ գեղեցկութեան եւ պտղաբերութեան աստուածուհին էր:

80 Աստղիկ որո՞ւն կիցն էր:

— Աստղիկ Վահագն աստուծոյ կիցն էր:

81 Աստղիկի կուռքը տօնական օրերուն ի՞նչ բաներով կը զարդարուէր:

— Աստղիկի կուռքը տօնական օրերուն վարդերով կը զարդարուէր, եւ ատոր համար իր տօնը կը կոչուէր Վարդավառ, որ կը նշանակէ վարդերով զարդարում:

82 Ո՞վ էր Նանէ:

— Նանէ Արամազդի աղջիկն էր: Ան աստուածուհին էր պատերազմի:

83 Ո՞վ էր Բարշամին:

— Բարշամին երկինքի աստուածն էր: Հայերը զայն փոխ առած էին Ասորիներէ:

84 Ո՞վ էր Վահագն:

– Վահագն լոյսի, արեւի եւ քաջութեան աստուածն էր:

85 Ան ի՞նչ բաներ կը սպաններ:

– Ան իր մեծագոր քաջութեամբ կը սպաններ վիշապներ:

86 Հայ ժողովուրդը Վահագնի կամ Արեւի ծագումը ի՞նչ բանով փառաւորած է:

– Հետեւեալ շա՛տ հին ու գեղեցիկ երգով.—
*«Երկնէր երկին եւ երկիր,
 Երկնէր եւ ծիրանի ծով,
 Երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն:
 Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելանէր,
 Ընդ եղեգան փող բո՛ց ելանէր,
 Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր:
 Նա հուր հեր ունէր. Բոց ունէր մօրուս
 Եւ աչկունքն էին արեգակունք»:*

87 Հայ ժողովուրդը բնութեապաշտութեան ու ոգեպաշտութեան շրջաններուն իր պաշտամունքը ո՞ր կը կատարէր:

– Բացօթեայ վայրերու եւ կամ անտառներու մէջ:

88 Կոապաշտութեան շրջանին ի՞նչ բաներ շինած էին:

– Կոապաշտութեան շրջանին յատուկ տաճարներ չինած էին, որոնք մեհեան կը կոչուէին:

89 Չաստուածներու կուռքերու առջեւ ի՞նչ կը դրուէին:

– Չաստուածներու կուռքերու առջեւ նուիրական սեղաններ կը դրուէին. անոնք կը կոչուէին Բագին:

90 Բագինի վրայ ի՞նչ կը մատուցուէր:

– Բագինի վրայ զոհ կը մատուցուէր:

91 Մեհեանները ի՞նչ կ'ունենային:

– Մեհեանները գանձարաններ կ'ունենային:

92 Գանձարաններու մէջ ի՞նչ բաներ կը պահուէին:

Գանձարաններու մէջ մեհեանին թանկագին զարդերը եւ ժողովուրդին ընծայած նուէրները կը պահուէին:

93 Կուռքերու պաշտամունքը կատարելու եւ կենդանիներ զոհելու համար որո՞նք կային:

– Մասնաւոր պաշտօնեաներ կամ քահանաներ, որոնք քուրմ կը կոչուէին:

94 Քուրմերուն մեծը ո՞վ էր:

– Քրմապետը:

95 Քրմութիւնը ի՞նչ տեսակ դասակարգ կը կազմէր:

– Քրմութիւնը մասնաւոր եւ առանձնաշնորհալ դասակարգ մը կը կազմէր հին Հայաստանի մէջ, եւ ազդեցիկ ու զօրաւոր էր ազնուականութեան չափ:

96 Հայաստանի զանազան շրջաններուն մէջ ի՞նչ բաներ կային:

– Հայաստանի զանազան շրջաններուն մէջ կային կռապաշտական տաճարներ, իրենց քուրմերով:

97 Որո՞նք են Հայաստանի եօթը գլխաւոր մեհեանները:

– ա. Արամազդի մեհեանը Անի ամրոցին եւ Բագաւանի մէջ:

բ. Անահիտի մեհեանը Երիզայի, Արտաշատի մէջ եւ այլուր:

գ. Միհրի մեհեանը Բագայառիճի (Դերջան) մէջ:

դ. Տիրի մեհեանը Երազամոյնի մէջ (Վաղարշապատէն Արտաշատ տանող ճամբուն վրայ):

ե. Աստղիկի մեհեանը Աշտիշատի (Տարօն) մէջ, ուր կային նաեւ Վահագնի ու Անահիտի կուռքերը:

զ. Բարշամինի արձանը Թորդանի մէջ:

է. Նանէի մեհեանը Թիլ աւանի մէջ:

98 Այս մեհեաններուն ժողովուրդը ինչո՞ւ կու գար:

– Այս մեհեաններուն ժողովուրդը ամէն տարի ուխտի կու գար Հայաստանի բոլոր շրջաններէն:

99 Այս բոլոր մեհեանները ե՞րբ քանդուեցան:

– Դ. դարու սկիզբը, հայ ժողովուրդի երկրորդ Լուսաւորչին՝ Սուրբ Գրիգորի ձեռամբ քանդուեցան:

100 Ի՞նչ կը գտնուի Գառնի գիւղին մօտ:

– Գառնի գիւղին մօտ այժմ կը գտնուի Գառնիի հեթանոսական տաճարը, որ վերականգնուած է:

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ

1 Համբարձման օրը Յիսուս իր առաքելներուն ի՞նչ ւսեցնեց:

— Համբարձման օրը Յիսուս իր առաքելներուն աւետեց որ շուտով Սուրբ Հոգիին շնորհքները պիտի ստանան, ապա պիտի երթան եւ իր գործերն ու պատուիրանները քարոզեն ամբողջ աշխարհի:

2 Համբարձումէն տասը օր ետք ի՞նչ պատահեցաւ:

— Հրեաներու Պենտեկոստէ կոչուած տօնին, առաքելներն ու Յիսուսի հետեւորդ հաւատացեալները երբ վերնատան մէջ հաւաքուած կ'աղօթէին, յանկարծ ուժգին հնչեց երկնային ձայն մը՝ սաստիկ հովի նման, եւ բոլոր ներկաները լեցուեցան Սուրբ Հոգիին շնորհքներով:

3 Անոնք ի՞նչ ստացան:

— Անոնք հոգեկան զօրութիւն ստացան եւ զանազան լեզուներ խօսելու կարողութեամբ օժտուեցան:

4 Հաւատացեալները առաքելներուն հետ ի՞նչ կազմեցին:

— Անոնք առաքելներուն հետ կազմեցին Յիսուս Քրիստոսի հաւատացեալներու առաջին ժողովը՝ Եկեղեցի:

5 Սուրբ Հոգիին գալը հաւատացեալներուն մէջ ի՞նչ կոչուեցաւ:

— Հոգեգալուստ, որ եղաւ քրիստոնէական եկեղեցիի հաստատման օրը:

6 Հոգեգալուստի օրը, հրէական Պենտեկոստէ տօնին առիթով, որո՞նք Երուսաղէմ հաւաքուած էին,

— Հեռաւոր երկիրներէ եկած օտարականներ, որոնց մէջ հայեր ալ կային:

7 Հոգեգալուստէն ետք, առաքելները ի՞նչ բանի ձեռնարկեցին:

— Հոգեգալուստէն ետք, առաքելները ձեռնարկեցին քարոզութեան: Անոնք Յիսուսի կեանքը, գործերն ու պատուէրները քարոզեցին ո՛չ միայն հրեաներուն, այլ եւ հեռաւոր երկիրներու ժողովուրդներուն:

8 Յիսուսի 12 առաքելներէն որո՞նք Հայաստան եկան եւ քրիստոնէութիւն քարոզեցին:

— Յիսուսի 12 առաքելներէն Թադէոս եւ Բարթողիմէոս առաքելներ Հայաստան եկան եւ քրիստոնէութիւնը քարոզեցին:

9 Թադէոս, առաջին անգամ, քրիստոնէութիւնը քարոզելու համար ո՞ր գնաց:
– Թադէոս, առաջին անգամ, քրիստոնէութիւնը քարոզելու համար Ասորի-
ներու Եդեսիա քաղաքը գնաց: Այդ ժամանակ, Եդեսիոյ թագաւորն էր Աբգար:

10 Աբգար թագաւոր երբ հիւանդացաւ որո՞ւն լուր դրկեց որ գայ եւ բժշկէ
զինք:

– Աբգար թագաւոր երբ հիւանդացաւ, լուր դրկեց Յիսուսի որ գայ եւ բժշկէ
զինք. բայց Յիսուս քարոզութեամբ ու բժշկութեամբ չատ զբաղած ըլլալով՝
խոստացաւ առաքեալներէն մէկը դրկել անոր մօտ:

11 Ո՞վ պալատ գնաց եւ թագաւորին քարոզեց Յիսուսի կեանքը, գործերն ու
պատուերները:

– Թադէոս առաքեալ: Աբգար թագաւոր հաւատաց Յիսուսի եւ բժշկուեցաւ
Թադէոս առաքեալի ձեռքով:

12 Թադէոս առաքեալ Եդեսիայէն ո՞ր անցաւ եւ ի՞նչ ըրաւ:

– Թադէոս առաքեալ Եդեսիայէն Հայաստան անցաւ ուր ամէնուրեք կը
տիրէր կռապաշտութիւնը: Ապա գնաց Շաւարշան գիւղաքաղաքը, ուր կը
գտնուէր արքունի պալատը: Այդ ժամանակ, հայոց թագաւորն էր Սանատրուկ:

13 Նորահաստատ քրիստոնէաներու մէջ ո՞վ կար:

– Նորահաստատ քրիստոնէաներուն մէջ կար հայոց թագաւորին աղջիկը՝
Սուրբ Սանդուխտ կոյս:

14 Սանատրուկ երբ իմացաւ որ խումբ մը հայեր քրիստոնէայ դարձած են, ի՞նչ
ըրաւ:

– Սանատրուկ երբ իմացաւ որ խումբ մը հայեր քրիստոնէայ դարձած են,
բարկացաւ եւ անմիջապէս սպաննել տուաւ զանոնք, իսկ Սուրբ Սանդուխտը
բանտարկեց:

15 Թադէոս առաքեալ ազատեցա՞ւ թագաւորին զայրոյթէն:

– Այո՛, Թադէոս առաքեալ, աստուածային հրաշքով, ազատեցաւ թագաւորին
զայրոյթէն եւ բանտ գնաց ու քաջալերեց Սուրբ Սանդուխտը: Բանտարկ-
եալներէն 33 հոգիներ հաւատացին Քրիստոսի եւ մկրտուեցան:

16 Սանատրուկ արքան ի՞նչ ըրաւ:

– Սանատրուկ արքան իշխաններ դրկեց իր աղջկան մօտ, որպէսզի համոզեն
զայն եւ ետ դարձնեն կռապաշտութեան: Բայց Սուրբ Սանդուխտը համոզելու
գացող իշխանները ընդհակառակը իրենք համոզուեցան եւ քրիստոնէայ
դարձան:

17 Յիսուսի 12 աշակերտներէն ուրիշ ո՞վ Հայաստան եկաւ:

– *Բարթողիմէոս առաքեալ որ Նաթանայէլ ալ կը կոչուէր, եւ որ նոյնպէս նուիրուեցաւ քարոզչական գործունէութեան:*

18 Սուրբ Բարթողիմէոս առաքեալի շնորհիւ ո՞վ հաւատաց Յիսուսի եւ մկրտուեցաւ:

– *Սուրբ Բարթողիմէոս առաքեալի շնորհիւ Սանատրուկ թագաւորի քոյրը՝ Սուրբ Ոգուհի հաւատաց Յիսուսի եւ մկրտուեցաւ:*

19 Սանատրուկ թագաւոր երբ տեսաւ որ իր քոյրն ալ քրիստոնեայ դարձած է, ի՞նչ ըրաւ:

– *Սուրբ Ոգուհի սրամահ եղաւ. իսկ Սուրբ Բարթողիմէոս առաքեալ փշոտ գաւազաններու գանակոծումով մեռցուեցաւ 68 թուին:*

20 Հալաճանքի շրջանին, կոապաշտ թագաւորներու կողմէ ուրիշ որո՞նք հալածուեցան:

– *Հալաճանքի շրջանին՝ կռապաշտ թագաւորներու կողմէ հալածուեցան՝ Սուրբ Ոսկեաններն ու Սուրբ Սուքիասեանները:*

21 Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարթողիմէոս առաքեալները ի՞նչ եղան եւ ի՞նչ հիմնեցին:

Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարթողիմէոս առաքեալները եղան Հայ ժողովուրդի Առաջին Լուսաւորիչները: Անոնք հիմնեցին Հայաստանեայց Եկեղեցին:

22 Ատոր համար Հայոց եկեղեցին, ուրիշ հին եկեղեցիներուն նման, ի՞նչ կը կոչուի:

– *Ատոր համար Հայոց եկեղեցին Առաքելական Եկեղեցի կը կոչուի:*

23 Քարոզուած քրիստոնէութիւնը որո՞ւն կողմէ ընդունուեցաւ:

– *Քարոզուած քրիստոնէութիւնը Հայ լուսաւէր ժողովուրդին կողմէ ընդունուեցաւ, իսկ արքունիքը մերժեց ու հալածեց զայն մինչեւ 301 թուականը:*

24 Քրիստոնէութիւնը ե՞րբ պետական կրօնք հռչակուեցաւ:

– *301 թուականին, երբ Տրդատ թագաւոր, Հայոց Երկրորդ Լուսաւորիչ Սուրբ Գրիգոր Հայրապետի ջանքերով կռապաշտութենէ հրաժարեցաւ եւ քրիստոնէութիւնը հռչակեց Հայաստանի պետական կրօնքը՝ առաջինը ըլլալով ամբողջ քրիստոնեայ աշխարհին մէջ:*

25 Թադէոս ու Բարթողիմէոս առաքեալներէն մինչեւ Սուրբ Գրիգոր

Լուսաւորիչ որո՞նք եղան քրիստոնէական կրօնքը քարոզող եւ քրիստոնէայ հայերը առաջնորդող հոգեւոր պետերը կամ հայրապետները:

– *Զաքարիա, Զեմենտոս, Ատրներսեհ, Մուշէ, Շահէն, Շաւարշ, Ղեւոնդիոս եւ Մեհրուժան:*

26 Տրդատ թագաւորի եւ Գրիգոր Լուսաւորիչի հայրերը բարեկա՞մ էին իրարու:

– *Ո՛չ, Տրդատ թագաւորի եւ Գրիգոր Լուսաւորիչի հայրերը բարեկամ չէին իրարու, անոնց հայրերը իրարու թշնամի էին:*

27 Ո՞վ սպաննեց Տրդատ թագաւորին հայրը:

– *Գրիգորին հայրը՝ Անակ, սպաննեց Տրդատ թագաւորին հայրը՝ Խոսրով թագաւորը, եւ Պարսկաստանի Արտաշիւր թագաւորը սպաննել տուաւ Խոսրով Պարթեւի գերդաստանը: Կոտորածէն ազատեցան միայն Տրդատ եւ անոր քոյրը՝ Խոսրովիդուխտ: Փոքրիկն Տրդատ փախցուեցաւ Հռոմ եւ այնտեղ խնամուեցաւ:*

28 Խոսրով թագաւորի նախարարները վրէժ լուծելու համար ի՞նչ ըրին:

– *Խոսրով թագաւորի նախարարները վրէժ լուծելու համար սպաննեցին Անակը եւ անոր ընտանիքը: Այս կոտորածէն ազատեցաւ միայն Գրիգորը, Անակի որդին, որ Կեսարիա փոխադրուեցաւ:*

29 287 թուականին, երբ Տրդատ մեծցաւ ի՞նչ ըրաւ:

– *287 թուականին, Տրդատ հռոմէական զօրքերու օգնութեամբ հայրենիք մտաւ եւ գրաւեց հօրենական գահը:*

30 Գրիգոր Կեսարիոյ մէջ քրիստոնէական ուսումը առնելէ ետք ո՞ր վերադարձաւ:

– *Գրիգոր Կեսարիոյ մէջ քրիստոնէական ուսումը առնելէ ետք, վերադարձաւ Հայաստան, եւ Տրդատի պալատին մէջ քարտուղարի պաշտօն ստացաւ:*

31 Տրդատ թագաւոր իր յաղթանակը տօնելու համար ի՞նչ կազմակերպեց:

– *Տրդատ թագաւոր իր յաղթանակը տօնելու համար գոհութեան եւ ցնծութեան տօնախմբութիւն մը կազմակերպեց, Անահիտ դիցուհիի մեհեանին մէջ:*

32 Տրդատ ի՞նչ պատրաստեց:

– *Տրդատ պատրաստեց ծաղկեայ գեղեցիկ պսակներ եւ հրահանգեց իր քարտուղարին՝ Գրիգորի, որ ինք անձամբ ընծայէ զանոնք Անահիտ դիցուհիին:*

33 Գրիգոր ի՞նչ ըրաւ:

– Գրիգոր մերժեց թագաւորին հրահանգին ենթարկուիլ եւ յայտնեց որ ինք քրիստոնեայ է, միայն ճշմարիտ Աստուծոյ կ'երկրպագէ:

34 Տրդատ երբ այս խօսքերը լսեց ի՞նչ ըրաւ:

– Տրդատ շատ բարկացաւ. մանաւանդ երբ իր նախարարներէն իմացաւ որ իր հայրը սպաննող Անակի որդին է՝ զայրացաւ եւ հրամայեց Գրիգորը նետել հորի մը մէջ, որ կը կոչուէր Խոր Վիրապ, որպէս զի անօթի ու ծարաւ մնալով հոն մեռնի:

35 Գրիգոր քանի՞ տարի Խոր Վիրապ մնաց:

– Գրիգոր Աստուծոյ օգնութեամբ եւ աղօթքներով ապրեցաւ 13 տարի: Քրիստոնեայ բարի կ'ին մը հոգաց անոր ամէնօրեայ հացը, ինչպէս նաեւ ամէն օր հրեշտակ մը կ'այցելէր իրեն Աստուծոյ կողմէ:

36 Տրդատ թագաւոր ի՞նչ ըրաւ:

– Տրդատ թագաւոր հրովարտակով մը խստօրէն արգիլեց քրիստոնէական կրօնքը եւ հալածանք հռչակեց քրիստոնեաներուն դէմ:

37 Հալածուած քրիստոնեաներուն մէջ որո՞նք նշանաւոր հանդիսացան:

– Հալածուած քրիստոնեաներուն մէջ նշանաւոր հանդիսացան Քառասուն աղջիկներ, Հռիփսիմեան Կոյսեր, որոնց պետն էր Գայիանէ: Անոնք կը բնակէին վանքի մը մէջ որ կը կոչուէր Հոգեաց վանք: Անոնք ամէն օր կ'աղօթէին ու ձեռագործ կ'ընէին:

38 Ո՞վ էր անոնց մէջէն հոգիով եւ դէմքով ամենէն գեղեցիկը:

– Հռիփսիմէ, որուն անունով անոնք կոչուեցան Հռիփսիմեան Կոյսեր:

39 Տրդատ թագաւոր լսելով քառասուն կոյսերուն եւ Հռիփսիմէի մասին ի՞նչ ըրաւ:

– Իր զինուորները ղրկեց եւ պալատ բերել տուաւ Գայիանէ եւ Հռիփսիմէ կոյսերը: Թագաւորը երբ տեսաւ գեղեցիկ Հռիփսիմէն եւ լսեց անոր խելացի խօսքերը, ուզեց ամուսնանալ անոր հետ:

40 Հռիփսիմէ ընդունեցա՞ւ թագաւորին առաջարկը:

– Ո՛չ, Հռիփսիմէ մերժեց թագաւորին այս առաջարկը ըսելով՝ – Ես քրիստոնեայ եմ եւ կը պաշտեմ միայն մէկ եւ ճշմարիտ Աստուծոյ, եւ չեմ կրնար ամուսնանալ թագաւորի մը հետ որ մարդոց ձեռքերով շինուած կուռքերը կը պաշտէ եւ անոնց երկրպագութիւն կ'ընէ:

41 Տրդատ կրցա՞ւ համոզել Հռիփսիմէ կոյսը:

– Տրդատ թագաւոր ջանաց համոզել Հռիփսիմէն: Սակայն անկարելի եղաւ: Ապա խնդրեց Գայիանէ կոյսէն որ խրատէ Հռիփսիմէն՝ ընդունելու իր առաջարկը:

42 Գայիանէ ի՞նչ խրատեց Հռիփսիմէին:

– Գայիանէ քաջալերեց Հռիփսիմէն որ հաստատ մնայ իր ճշմարիտ հաւատքին վրայ եւ չուրանայ իր կրօնքը:

43 Տրդատ թագաւոր երբ տեսաւ որ իր ջանքերը արդիւնք չեն տար ի՞նչ ըրաւ:

– Զղայնացած մէկ պահուն հրամայեց սպաննել բոլոր քառասուն կոյսերը: Թագաւորին հրամանը կատարուեցաւ անմիջապէս:

44 Անմեղ կոյսերու նահատակութիւնը ի՞նչ պատճառեց:

– Անմեղ կոյսերու նահատակութիւնը մեծ ցաւ պատճառեց թէ՛ պալատականներուն եւ թէ՛ թագաւորին, որովհետեւ անոնք շատ բարի եւ ուրիշներուն օգնող կոյսեր էին, եւ իրենց կեանքին մէջ ոչ մէկուն վնաս հասցուցած էին:

45 Թագաւորը ի՞նչ եղաւ:

– Թագաւորը սրտի ցաւէն հիւանդացաւ եւ խենթեցաւ: Պալատը ձգեց, անտառ գնաց եւ կենդանիներու նման կեանք մը սկսաւ ապրիլ:

46 Տրդատ թագաւորի քոյրը՝ Խոսրովիդուխտ, ի՞նչ տեսաւ:

– Տրդատ թագաւորի քոյրը՝ Խոսրովիդուխտ, տարօրինակ երազ մը տեսաւ: Երազին մէջ Աստուած իրեն յայտնեց որ իր թագաւոր եղբայրը միայն Գրիգորը կրնայ բժշկել:

47 Խոսրովիդուխտ ի՞նչ ըրաւ:

– Խոսրովիդուխտ Օտա Ամատունի նախարարը ղրկեց եւ իւր Վիրապէն հանել տուաւ Գրիգորը, որ Աստուծոյ օրհնութեամբ, աղօթքներով եւ բարի կնոջ տուած ուտելիքներով կ'ապրէր տակաւին:

48 Ի՞նչ ըրաւ Գրիգոր:

– Գրիգոր աղօթեց եւ Աստուծոյ օգնութեամբ բժշկեց Տրդատ թագաւորը:

49 Տրդատ թագաւոր բժշկուելէ ետք ի՞նչ բանի հաւատաց:

– Տրդատ թագաւոր բժշկուելէ ետք հաւատաց Աստուծոյ զօրութեան եւ քրիստոնէական կրօնքի ճշմարտութեան, եւ խնդրեց Գրիգորէն որ զինք եւ բոլոր պալատականները Աստուծոյ անունով քրիստոնէայ մկրտէ:

50 Ինչո՞ւ Գրիգոր կոչուեցաւ Լուսաւորիչ:

– Որովհետեւ իր ջանքերով ամբողջ Հայաստան աշխարհի հայ հոգիները

լուսաւորուեցան քրիստոնէական կրօնքի լոյսով եւ քրիստոնէութիւնը հռչակուեցաւ Հայաստանի Պետական կրօնքը՝ 301 թուականին:

51 Գրիգոր Լուսաւորիչ ի՞նչ տեսաւ:

– Գրիգոր Լուսաւորիչ տեսիլք մը տեսաւ: Տեսիլքին մէջ, երկինքէն լոյսի շողեր կաթկթեցան եւ Աստուծոյ Միածին Որդին՝ Յիսուս, իջաւ պալատին մօտ հեթանոսական տաճարի մը վայրը եւ ոսկի մուրճով հարուածեց զետինը:

52 Տրդատ թագաւոր քրիստոնէութիւնը Հայոց Պետական կրօնքը հռչակելէ ետք ի՞նչ հրամայեց:

– Տրդատ թագաւոր քրիստոնէութիւնը Հայոց Պետական կրօնք հռչակելէ ետք, հրամայեց որ քանդեն կռապաշտական բոլոր մեհեանները:

53 Պաշտօնապէս եւ ազգովին քրիստոնեայ դարձող առաջին ազգը որո՞նք եղան:

– Պաշտօնապէս եւ ազգովին քրիստոնեայ դարձող առաջին ազգը Հայերը եղան:

54 Գրիգոր Լուսաւորիչ ո՞ր եւ ո՞ր թուականին կաթողիկոս ձեռնադրուեցաւ:

– Գրիգոր Լուսաւորիչ կաթողիկոս ձեռնադրուեցաւ Կապադովկիոյ Կեսարիա քաղաքը 302 թուականին:

55 Գրիգոր Լուսաւորիչ երբ Վաղարշապատ դարձաւ ի՞նչ ըրաւ:

– Գրիգոր Լուսաւորիչ երբ Վաղարշապատ դարձաւ անմիջապէս սկսաւ Մայր եկեղեցիի շինութեան: Նորաշէն տաճարը օծուեցաւ 303 թուականին, Օգոստոս 15-ին եւ անուանուեցաւ Սուրբ Աստուածածին: Հետագային է որ անկէ կոչուեցաւ Սուրբ Էջմիածին, որ կը նշանակէ իջաւ Միածինը:

56 Եկեղեցիներու շինութենէն ետք Գրիգոր Լուսաւորիչ ինչպիսի՞ աշխատանքի ձեռնարկեց:

– Եկեղեցիներու շինութենէն ետք Գրիգոր Լուսաւորիչ կրօնական եւ կրթական աշխատանքի ձեռնարկեց:

57 325-ին Կոստանդնուպոլսոյ Նիկիա քաղաքին մէջ քրիստոնեայ եկեղեցիներու հայրապետները ի՞նչ գումարեցին:

– 325-ին Կոստանդնուպոլսոյ Նիկիա քաղաքին մէջ բոլոր քրիստոնեայ եկեղեցիներուն հայրապետները, թիւով 318, ժողով գումարեցին, որպէս զի նգովեն Արիոս անուն մարդը որ կը մոլորեցնէր հաւատացեալները, ըսելով թէ Քրիստոս Աստուծոյ Որդին չէ եւ Քրիստոս Աստուած չէ:

58 Սուրբ Գրիգոր Լուսաւորչի հրաւեր եկա՞ւ:

– Այո՛, Սուրբ Գրիգոր Լուսավորչի հրաւէր եկաւ, բայց չկրցաւ երթալ, որովհետեւ ծերացած էր. իր զաւակը Արիստակէս գնաց եւ մասնակցեցաւ ժողովին:

59 Նիկիոյ ժողովին մէջ 318 եկեղեցական հայրերը ի՞նչ ըրին:

– Նիկիոյ ժողովին մէջ 318 եկեղեցական հայրեր նգովեցին Արիոսը ու ըսին.– Մենք կը հաւատանք որ Յիսուս Քրիստոս Հայր Աստուծոյ Միածին Որդին է եւ Աստուած է:

60 Գրիգոր մեծ հայրապետը ե՞րբ վախճանեցաւ:

– Գրիգոր մեծ հայրապետը 325 թուականին վախճանեցաւ:

61 Տարին քանի՞ անգամ կը տօնախմբուի անոր յիշատակը:

– Անոր յիշատակը կը տօնախմբուի երեք անգամ:

62 Սուրբ Գրիգոր հայրապետ քանի՞ զաւակ ունէր:

– Սուրբ Գրիգոր հայրապետ ունէր երկու զաւակներ՝ Արիստակէս եւ Վրթանէս, որոնք իր մահէն ետք կաթողիկոս եղան յաջորդաբար:

63 Ո՞վ յաջորդեց Արիստակէսի:

– Արիստակէսի յաջորդեց իր եղբայրը՝ Վրթանէս, 333–341:

